Հավելված

Հաստատված է
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի
2019 թվականի մարտի 18-ի N 9-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

1. Ներածություն _____3

2. Որակի ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված տարեկան հաշվետվություն _____ 4

3. Տեսչական մարմնի 2018թ. գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու մասին տեղեկատվություն, արդյունքների վերլուծություն____ 5

4. Տեսչական մարմնի կողմից կատարված իրազեկման միջոցառումները_____5

5. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա ռիսկերը _____5

6. Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը և դրանց արդյունքները_____6

7. Տեսչական մարմնի կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումները, դրանց նպատակները և արդյունքները_____8

8. Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները և դրանց արդյունքները_____ 8

9. Օրենսդրական առաջարկները_____ 9

10. Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բողոքները_____ 10

11. Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում նախորդ 2 տարիների իրավիճակը, դինամիկան և առաջիկա անելիքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն_____ 10

1. Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2018 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) հիմքերն են «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության համապատասխան դրույթները:

Տեսչական մարմինը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշմամբ: Տեսչական մարմնի ղեկավարը նշանակվել է ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի սեպտեմբերի 06-ի N 1193-Ա որոշմամբ:

Նշանակումից հետո Տեսչական մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշումը, ՀՀ վարչապետի հաստատմանն է ներկայացրել տեսչական մարմնի աշխատողների թիվը, որի հաստատումից հետո ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն են ներկայացվել Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո ապահովվել է Տեսչական մարմնի հաստիքացուցակը կառավարման խորհրդի հավանությանը ներկայացնելը: 2018 թվականի նոյեմբերի 3-ին հրավիրվել է Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստ, որտեղ համաձայնեցվել է Տեսչական մարմնի հաստիքացուցակը, խորհրդի կողմից հավանություն է տրվել Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների թեկնածուներին, ովքեր ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի նոյեմբերի 5-ի N 1473-Ա և N 1474-Ա որոշումներով նշանակվել են Տեսչական մարմնի ղեկավարի տեղեկալները:

2018 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարվել են կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կազմավորման, աշխատանքային տարածքների ընտրման և որոշակի բարեկարգման աշխատանքներ:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից հաստիքացուցակի հաստատումից հետո հնարավոր չի եղել թափուր պաշտոնների համալրման համար մրցույթներ հայտարարել՝ պաշտոնական կայք չունենալու պատճառով: Դեկտեմբերի 3-ին և 5-ին միայն Տեսչական մարմինը համալրվել է համապատասխանաբար 16 և 19 թվով աշխատակիցներով, որը, սակայն բավարար չի եղել Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ամբողջությամբ ապահովելու համար:

ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել նաև Տեսչական մարմնին ամրացվող գույքի ցանկը:

2. Որակի ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված տարեկան հաշվետվություն

Տեսչական մարմինը, ձևավորվելով ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշմամբ, առ այսօր դեռևս ամբողջությամբ համալրված չէ աշխատակիցներով. կադրային առաջին համալրումը կատարվել է 2018 թվականի դեկտեմբերի 03-ից՝ մասնակի, այսինքն՝ Տեսչական մարմինը փաստացի գործունեությունը սկսել է 2018 թվականի դեկտեմբերի 3-ից, այն էլ մասամբ, ուստի որակի ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված կատարողականի գնահատման արդյունքներ հնարավոր չէ տրամադրել:

3. Տեսչական մարմնի 2018թ. գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու մասին տեղեկատվություն, արդյունքների վերլուծություն

Հնարավոր չէ տրամադրել 2-րդ գլխով նշված պատճառով:

4. Տեսչական մարմնի կողմից կատարված իրազեկման միջոցառումները

ԶԼՄ-ներով լուսաբանվել է Տեսչական մարմնի ստեղծման, վերջինիս իրավասությունների շրջանակի, ստեղծման նպատակների մասին, ինչպես նաև օպերատիվ կերպով արձագանքվել է հանրության կողմից բարձրացված և լայն արձագանք ստացած խնդիրներին: ԶԼՄ-ների միջոցով իրականացվել է նաև խորհրդատվական աշխատանք՝ ուղղված տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցության բարձրացմանը:

Աշխատանքներ են տարվում Տեսչական մարմնի պաշտոնական կայքի ամբողջական ձևավորման և արդիականացման ուղղությամբ: Գործում է Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջը, որտեղ օրեցօր ավելանում է Տեսչական մարմնի գործունեությամբ հետաքրքրված այցելուների թվաքանակը, պարբերաբար կատարվում են պարզաբանումներ Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ:

5. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում առկա ռիսկերը

Տեսչական մարմնի կողմից կարգավորվող ոլորտներում առկա ռիսկերը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է, որ այն համարված լինի համապատասխան ոլորտների աշխատակիցներով, ընդունվեն օրենսդրական առաջարկված փոփոխություններն ու լրացումները, վերլուծվեն իրականացված ստուգումների արդյունքները, այսինքն՝ ապահովվի Տեսչական մարմնի բնականոն գործունեությունը: Սակայն, ներկա պահին Տեսչական մարմինը դեռևս ձևավորման փուլում է, կարգավորված չէ օրենսդրական դաշտը, որը թույլ կտա իրականացնել ստուգումներ, ուստի պահանջվող վիճակագրությունը 2018 թվականի համար հնարավոր չէ տրամադրել:

6. Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը և դրանց արդյունքները

Տեսչական մարմնի նախաձեռնությամբ ակտիվ գործունեություն է ծավալվում տնտեսվարող սուբյեկտներին Տեսչական մարմնի ստեղծման ու գործունեության ոլորտների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ, պարբերաբար

հրապարակումներ են կատարվում ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ մինչև Տեսչական մարմի պաշտոնական կայքի վերջնական ձևավորումը:

Քանի որ Տեսչական մարմինը նոր է ձևավորվել և վերջինիս կողմից 2018 թվականի ընթացքում լրիվ ծավալով գործունեություն չի իրականացվել, տնտեսվարող սուբյեկտների կողմից հաճախ տրվել են նմանաբնույթ հարցեր՝

- ո՞ր ոլորտներում է իր գործունեությունը ծավալում Տեսչական մարմինը,
- ու՞ր պետք է դիմել համապատասխան փաստաթղթերի ներկայացման կամ ստացման համար,
- ե՞րբ են իրականացվելու ստուգումներ:

Այսինքն՝ հաճախ տրվող հարցերի գերակշիռ մասը Տեսչական մարմնի գործունեությանը ծանոթանալու նպատակ են հետապնդում:

Էներգետիկայի և էներգասպառման վերահսկողության ոլորտում ստացվել է թվով 5 դիմում-բողոք, որոնք քննարկվել և, ըստ անհրաժեշտության, տեղում կատարվել են ուսումնասիրություններ: 2-ի դեպքում խնդիրը լուծվել է, իսկ 3-ը գտնվում են ընթացիկ փուլում: Ուսումնասիրությունների արդյունքում միայն դեկտեմբեր ամսին տրվել է 80 հատ գործարկման եզրակացություն, կատարվել է Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների թվով 5 մասնագիտական քննություն, և կազմվել համապատասխան թվով արձանագրություն:

Տրանսպորտային անվտանգության ոլորտում կազմակերպությունների և քաղաքացիների կողմից կանոնավոր, ոչ կանոնավոր և տաքսամոտորային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացների նկատմամբ ստացվել է ընդհանուր թվով 24 դիմում-բողոք, որոնցից 6-ն ավտոբուսային և 18-ը՝ տաքսամոտորային փոխադրումների վերաբերյալ: Տրանսպորտային անվտանգության վարչության աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ Երևան քաղաքի տարածքում, ինչպես նաև «Հայավտոկայան» ՓԲ ընկերության ավտոկայարաններում և ե/կետերում: Բարձրացված խնդիրների քննարկման և դրանց լուծման նպատակով տրանսպորտային անվտանգության վարչություն են հրավիրվել թվով 3 փոխադրող կազմակերպության տնօրեններ, որոնց տրվել են անհրաժեշտ, պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հանձնարարականներ: Նշված բոլոր դիմում-բողոքները

ստացել են իրենց դրական լուծումները: Կազմակերպվել են միջմարզային ուղևորափոխադրումներ իրականացնող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, վերջիններիս հետ տարվել են իրազեկման աշխատանքներ:

Նախկին ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից կայացված որոշումների և ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գումարների բռնագանձումների վերաբերյալ հարցերով տրանսպորտային անվտանգության վարչությանը բանավոր դիմած 18 քաղաքացիների տրվել են համապատասխան պարզաբանումներ և բարձրացված հարցերի սպառիչ պատասխաններ:

Քաղաքաշինական գործունեության բնագավառում ստացվել և համապատասխան ընթացք է տրվել 42 դիմում-բողոքի և գրության: Դրանք քննարկվել և, ըստ անհրաժեշտության, տեղում կատարվել են ուսումնասիրություններ՝ իրականացնելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն: Ներկայացվել է թվով 347 ավարտական ակտի՝ շահագործման (թույլտվություն) դիմում (այդ թվում՝ Երևան քաղաքից՝ 248 հատ, ՀՀ մարզերից՝ 99 հատ), որից 203 հատին տրվել է դրական պատասխան, 64 հատին՝ բացասական, մնացածը՝ ընթացիկ, թվով 804 շինարարության թույլտվության դիմում (այդ թվում՝ Երևան քաղաքից՝ 488 հատ, ՀՀ մարզերից՝ 316 հատ), տրվել է թվով 19 քանդման թույլտվություն (Երևան քաղաքում՝ 13 հատ, ՀՀ մարզերում՝ 6 հատ), թվով 245 ՁՆ N 2-5 տեղեկանք (այդ թվում՝ Երևան քաղաք՝ 149 հատ, ՀՀ մարզեր՝ 96 հատ):

Գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում ստացվել է 2 դիմում-բողոք, որոնցից մեկը՝ ՀՀ վարչապետի պետական վերահսկողական ծառայության կողմից Տավուշի մարզի Իջևան համայնքի մասով, մյուսը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարից՝ Արարատի մարզի Վեդի քաղաքում ըստ անհրաժեշտության ստուգում իրականացնելու վերաբերյալ: Վերոհիշյալի կապակցությամբ գրություն է ուղարկվել վարչապետի աշխատակազմ ARPIS ծրագրից օգտվելու թույլտվություն ստանալու համար:

7. Տեսչական մարմնի կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումները, դրանց նպատակները և արդյունքները

ԶԼՄ-ներով լուսաբանվել է Տեսչական մարմնի ստեղծման ու գործունեության ոլորտների մասին, օպերատիվ կերպով արձագանքվել է հանրության կողմից բարձրացված և լայն արձագանք ստացած խնդիրներին, իրականացվել է խորհրդատվական աշխատանք՝ ուղղված տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցության բարձրացմանը:

Աշխատանքներ են տարվում Տեսչական մարմնի պաշտոնական կայքի արդիականացման, իրազեկման և խորհրդատվական աշխատանքներում ԶԼՄ-ներին ներգրավելու և համագործակցելու ուղղությամբ:

8. Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումները և դրանց արդյունքները

Տեսչական մարմինը, ձևավորվելով 2018 թվականի հունիսի 11-ին, 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագիր չի ունեցել, օրենսդրական ոլորտում անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ չեն կատարվել, որի արդյունքում Տեսչական մարմնի կողմից 2018 թվականի ընթացքում ստուգումներ չեն իրականացվել: Բայց Տեսչական մարմնի վերահսկողությանը վերապահված բնագավառներում թողտվությունից խուսափելու նպատակով վերջինիս կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որոնց ընթացքում առավել հաճախ հանդիպող խախտումներն են՝ *քաղաքաշինության բնագավառում*՝ փաստաթղթային ձևակերպումների խախտումները, նախագծային շեղումները, *էներգետիկայի բնագավառում*՝ փորձաքննությունների վերաբերյալ փաստաթղթերի բացակայությունը, չափման արձանագրությունների բացակայությունը, նախագծային շեղումները, *գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում*՝ քաղաքացիների կողմից անօրինական շինարարական աշխատանքներ կատարելու պայմաններում համայնքների ղեկավարների կողմից անգործության դրսևորումը, *տրանսպորտի բնագավառում* երթուղայինների կողմից ուղեգծերից շեղումները, երթուղու սկզբնակետի և վերջնակետի խախտումները, չվացուցակի խախտումները, սպիտակ համարանիշներով ուղևորափոխադրումների իրականացումը: *Հրդեհային և տեխնիկական*

անվտանգության բնագավառում ուսումնասիրություններ և ստուգումներ չեն իրականացվել, քանի որ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 28-ը գործել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը:

Խախտումների հիմնական և առաջնային պատճառը անպատժելիության մթնոլորտն է, քանի որ համապատասխան օրենսդրական փոփոխությունների բացակայության պայմաններում Տեսչական մարմինը հնարավորություն չունի կազմակերպելու ստուգումներ և կիրառելու պատասխանատվության միջոցներ: Այնուամենայնիվ, քաոսային վիճակից ու թողտվությունից խուսափելու նկատառումով՝ համապատասխան գրություններ են ուղարկվել նշված ոլորտները համակարգող պետական մարմիններ՝ իրենց իրավասությունների շրջանակներում համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, որոշ դեպքերում՝ օրենքով նախատեսված լինելու դեպքում, կիրառվել են՝ տուգանքներ, մնացած դեպքերում՝ բանավոր նախազգուշացումներ:

9. Օրենսդրական առաջարկները

Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակ (այսուհետ նաև՝ Գրասենյակ) ներկայացվել են քաղաքաշինության, տրանսպորտի, էներգետիկայի, տեխնիկական և հրդեհային անվտանգության, գեոդեզիայի, հողօգտագործման և քարտեզագրության բնագավառներում գործող և Տեսչական մարմնի լիազորություններին առնչվող այն իրավական ակտերի ցանկը, որոնցում անհրաժեշտ է լրացումներ և փոփոխություններ կատարել: Իսկ Տեսչական մարմնի կողմից մշակվել և Գրասենյակ է ներկայացվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Առաջարկված փոփոխությունները կապված են հիմնականում գործող իրավական ակտերում նախկինում գործող տեսչությունների անվանումները Տեսչական մարմնի անվանումով փոխարինելու հետ:

10. Տեսչական մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բողոքները

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ձևավորումից առ այսօր վերջինիս դեմ հայցադիմումներ և բողոքներ չկան ներկայացված:

ՀՀ վարչապետի՝ 11.06.2018թ.-ի թիվ 730-Լ որոշման հիման վրա տեսչական մարմնին է փոխանցվել 436 ընթացիկ դատական գործ, որոնցով ապահովվում է Տեսչական մարմնի պատշաճ ներկայացուցչությունը:

11. Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում նախորդ 2 տարիների իրավիճակը, դինամիկան և առաջիկա անելիքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն

Հաշվի առնելով, որ Տեսչական մարմինը ձևավորվել է ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման հիման վրա, Տեսչական մարմնի վերահսկման ոլորտում նախորդ 2 տարիների իրավիճակի և դինամիկայի վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել:

Տեսչական մարմինը ակտիվ և հետևողական աշխատանքի արդյունքում նախատեսում է իր կողմից վերահսկման ենթակա քաղաքաշինության, հրդեհային և տեխնիկական անվտանգության, էներգետիկայի, տրանսպորտի, հողօգտագործման, գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում ապահովել տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցության բարձրացումը, վերը նշված ոլորտներում ստուգումների կազմակերպման ու իրականացման համար անհրաժեշտ ստուգաթերթերի նախապատրաստումն ու շրջանառության մեջ դնելը, Տեսչական մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ձևավորումը, աշխատակիցներով համալրումը, պաշտոնական կայքէջի վերջնական ձևավորումն ու արդիականացումը, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը:

ՀՀ ՔՏՀԱՏՄ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ